«Հայաստանի Հանրապետություն», 31.11.2011

Հասանելի կդառնա յուրաքանչյուր գիտնականի

Հայկական վիրտուալ գրադարանը հայ գիտնականներին կմոտեցնի համաշխարհային մտքին

Նորաստեղծ «Հայկական վիրտուալ գիտական գրադարանը» Հայաստանի գիտնականներին եզակի հնարավորություն կտրամադրի «մեկ պատուհանի» սկզբունքով իրենց հասանելի դարձնել առցանց գիտական ամսագրերն ու շտեմարանները: Հենց այս ծրագրի շնորհանդեսը նոյեմբերի 29—ին կայացավ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայում: Վերջինիս նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը կարեւորեց այն հանգամանքը, որ ծրագիրը հնարավորություն կտա հայ գիտնականներին ոչ միայն ծանոթանալ համաշխարհային գիտական մտքին, այլեւ իրենց աշխատությունները ներկայացնել համաշխարհային հանրությանը: «Գրադարանի միջոցով հնարավորություն կտրվի գտնել համապատասխան գրականություն՝ առանց ժամանակ վատնելու»,–ասաց նա:

ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը նշեց, որ ծրագիրն էապես կհեշտացնի գիտական գրականության հասանելիությունը յուրաքանչյուր գիտնականի համար: «Սա հնարավորություն կտա հեշտացնել մեր հարաբերությունների ձեւավորումը արտասահմանյան գործընկերների հետ»,–կարեւորեց Սամվել Հարությունյանը: ՀՀ—ում ԱՄՆ արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Հեֆերնը հավաստիացրեց, որ գիտությունը եւ տեխնոլոգիական ոլոտները իրենց համար գերակա են, եւ փորձում են Հայաստանում գործընկերներ գտնել, որոնք աշխատում են այդ ասպարեզում:

Դեսպանը նաեւ նշեց, որ իրենք ակնկալում են խորացնել համագործակցությունը ԿԳՆ—ի եւ ԳԱԱ—ի հետ:

«Ծրագրի միջոցով հնարավոր կդառնա գրականության եւ տեղեկատվության երկկողմ փոխանակում: ԱՄՆ դեսպանությունը շատ բարձր է գնահատում նմանատիպ հաամագործակցությունը»,–ասաց Ջոն Հեֆերնը:

Այժմ գրադարանը ներառում է ավելի քան երեք մլն հոդված, ավելի քան ութ հազար ամսագիր՝ հայերենով, ռուսերենով եւ անգլերենով: